ՅՈՒՆԻԲԱՆԿ | ԲԱՆԿ ԵՎ ԱՎԵԼԻՆ

Հայտարարություն

Ընդհանուր տեղեկություններ		
1.	**Թողարկողը և տեղաբաշխողը**	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ
2.	**Արժեթղթերի դասը**	Անվանական, արժեկտրոնային, աժամկետ պարտատոմսեր
3.	**Ընդհանուր ծավալը**	9,000,000,000 ՀՀ դրամ
4.	**Անվանական արժեքը**	10,000 ՀՀ դրամ
5.	**Քանակը**	900,000 հատ
6.	**Թողարկման ամսաթիվը**	26.05.2026թ
7.	**Տեղաբաշխման ժամկետը**	26.05.2026թ – 09.09.2026թ
8.	**Շրջանառության ժամկետը**	Անժամկետ (5-րդ տարին լրանալուց հետո Բանկի կողմից վաղաժամկետ մարման/հետգնման հնարավորությամբ)
9.	**Արժեկտրոնների վճարման պարբերականությունը**	6 ամիս պարբերականությամբ
10.	**Արժեկտրոնային տոկոսադրույք**	- Շրջանառության առաջին 36 ամիսների համար՝ տարեկան **13.25%** - 36 ամիսների ավարտից հետո՝ ընթացիկ կիսամյակի սկզբին նախորդող օրվա դրությամբ հրապարակված ՊՊ եկամտաբերության կորի՝ 6 ամիս ժամկետայնության համար հաշվարկված մինչև մարում եկամտաբերություն + **6 %**
11.	**Ներդրողների շրջանակը**	Բանկի սովորական բաժնետոմսերի սեփականատերերը և ՀՀ ԿԲ 13.05.2026թ. գրանցված բաժնետոմսերի ազդագրի շրջանակում իրականացված Բանկի սովորական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման ընթացքում բաժնետոմսեր ձեռք բերած անձինք, որոնք ունեն կամ ձեռք են բերել առնվազն 2.600 հատ սովորական բաժնետոմս:
12.	**Ձեռքբերման սահմանափակումները**	- Ներդրողներն իրավունք ունեն ձեռք բերելու անժամկետ պարտատոմսեր՝ յուրաքանչյուր 2,600 հատ սովորական բաժնետոմսի հաշվով առավելագույնը 300 հատ անժամկետ պարտատոմս հարաբերակցությամբ: 2,600 հատը գերազանցող սովորական բաժնետոմսերի առկայության դեպքում անժամկետ պարտատոմսերի ձեռքբերման առավելագույն քանակն ավելանում է նույն համամասնությամբ՝ յուրաքանչյուր լրացուցիչ 8 հատ սովորական բաժնետոմսի հաշվով ներդրողը կարող է ձեռք բերել առավելագույնը 1 հատ անժամկետ պարտատոմս: - Ձեռքբերման նվազագույն քանկը սահմանվում է 100 հատ, իսկ նվազագույն ծավալը՝ 1,000,000 ՀՀ դրամ:
13.	**Արժեկտրոնի վճարման օրերը**	Արժեկտրոնի վճարման օր է հանդիսանում յուրաքանչյուր տարվա մայիսի 26-ը և նոյեմբերի 26-ը:
Բանկի լուծարման դեպքում անվանական անժամկետ պարտատոմսերի սեփականատերերի պահանջները (այդ թվում՝ տոկոսների գծով) ենթակա են բավարարման Բանկի մյուս բոլոր պահանջատերերի պահանջները		

բավարարվելուց հետո, բացառությամբ Բանկի սովորական բաժնետերերի պահանջների: Ընդ որում՝ անվանական անժամկետ պարտատոմսերի ամբողջ գումարը, նախքան Բանկի անվճարունակ ճանաչվելը, Ազդագրում սահմանված կարգով Բանկի կանոնադրական կապիտալի համալրմանն ուղղված լինելու պարագայում, անժամկետ պարտատոմսերի սեփականատերերը համարվում են Բանկի սովորական բաժնետոմսերի սեփականատերեր և նրանց պահանջները բավարարվում են Բանկի մյուս մասնակիցների պահանջների բավարարման հիմքով:
Բանկի կողմից թողարկված անվանական անժամկետ պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները երաշխավորված են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով սահմանված չափով, կարգով և պայմաններով, բացառությամբ այն դեպքի, երբ մինչև օրենքի 5-րդ հոդվածով սահմանված հատուցման դեպքի ի հայտ գալը անվանական անժամկետ պարտատոմսերը Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման հիմքով սույն Ազդագրում նկարագրված կարգով և չափով փոխարկվել են Բանկի սովորական բաժնետոմսերի:

«Յունիբանկ» ԲԲԸ Անժամկետ պարտատոմսերի Ծրագրային ազդագիրը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 2025թ. նոյեմբերի 26-ի Թիվ 1/427Ա որոշմամբ, իսկ Ծրագրային ազդագրի լրացումը՝ 2026թ. Մայիսի 22-ի Թիվ 1/228Ա որոշմամբ:

Ներդրողները Անժամկետ պարտատոմսերի Ծրագրային ազդագրի և ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերի տպագիր տարբերակները կարող են ձեռք բերել «Յունիբանկ» ԲԲԸ գլխամասային գրասենյակում (հասցե՝ ՀՀ, Երևան, Չարենցի 12, թիվ 53, 1-5) և մասնաճյուղերում (հասցեները տես բանկի ինտերնետային կայքում՝ www.unibank.am), իսկ էլեկտրոնային պատճենը՝ «Յունիբանկ» ԲԲԸ-ի ինտերնետային կայքում՝ www.unibank.am:

Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն և Բանկին պատշաճ կերպով առաքեն պարտատոմսերի ձեռքբերման հայտը, որով հավաստում են պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը և որով այդ պայմանները դառնում են ներդրողների համար պարտադիր: